

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



Մարզկենտրոնը՝
ք. Կապան

Տարածաշրջանները՝

- Կապան,
- Գորիս,
- Միսիան,
- Մեղրի

Քաղաքները՝

- Կապան,
- Գորիս,
- Միսիան,
- Մեղրի,

- Ագարակ,
- Քաջարան,

Դաստակերտ

Տարածքը	4506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Քաղաքներ	7
Գյուղեր	127
Բնակչության թվաքանակը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ	152.9 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	103.5 հազ. մարդ
գյուղական	49.4 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2010թ.	4.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.7 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	333598 հա
այդ թվում՝ վարելահողեր	43970 հա

ՀՀ Մյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պեյրիտի և դիատոմիտների պաշարներ):

Կապան քաղաքից հարավ՝ Ծավ գետի կիրճում գտնվում է աշխարհի ամենախոշոր բնական սուսիների ռելիկտային պուրակը, որը զբաղեցնում է գրեթե 120 հա տարածություն (ծառերի տարիքը հաշվվում է հարյուրամյակներով): Մյո եզակի պուրակի որոշ ծառերի տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 30-35 մ-ի:

Ողջի գետի աջ ափին, անտառում է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Մյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով **<<Շիկահող>> պետական արգելոցը:**

Ծովի մակերևույթից 3250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում **Մեղրի գետը**, իսկ Կապույտջուղ լեռան (3905մ) հալոցքաջրերից՝ Կապույտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը, հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435թթ.գործել է Տաթևի նշանավոր համալսարանը:

2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար <<Տաթևեր>> ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին:

Միսիան քաղաքից 6 կմ հեռավորության վրա է գտնվում **Շաքիի ջրվեժը**՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Միսիան քաղաքից 3.2 կմ դեպի հյուսիս գտնվում է <<**Ջորաց քարեր**>> **հուշարձանախումբը**, որը հայտնի է նաև Քարահունչ անունով: Մյն մեզայիթյան դարաշրջանի (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ) ծնունդ է: Ջորաց քարերը հանդիսանում են աշխարհում հայտնի հնագույն մեզայիթիկ համալիրներից և աստղադիտարաններից մեկը, հնդեվրոպական քաղաքակրթության քարեդարան-վկայարան, որի գաղտնիքները դեռևս բացահայտված չեն գիտության կողմից: Ջորաց քարերը հաճախ անվանում են <<հայկական Սթոունհենջ>>՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողների կարծիքով այստեղ ևս առկա է մեզայիթիկ աստղադիտարան:

ՀՀ Մյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը,

միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը **արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:**

2010թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 18.3 %,
- գյուղատնտեսություն 5.7 %,
- շինարարություն՝ 7.2 %,
- մանրածախ առևտուր՝ 0.9 %,
- ծառայություններ՝ 1.1 %:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է **բուսաբուծության** (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և **անասնաբուծության** (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ.-ին շահագործման է հանձնվել <<Կապան-Ծավ-Մեղրի>> ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք <<Կապան-Քաջարան-Մեղրի>> միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Կապան

Կապան քաղաքը (2010թ. տարեվերջ՝ 45.5 հազ. բնակիչ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), հեռավորությունը Երևանից 301 կմ: Հանրապետության խոշոր արդյունաբերական քաղաքներից մեկն է:

Տնտեսության առաջատար ճյուղն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, կարի, ոչ հանքային շինանյութերի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և սարքավորանքի արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան

Քաջարան քաղաքը (2010թ. տարեվերջին՝ 8.1 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 327կմ հեռավորության վրա) ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս

Գորիս քաղաքի (2010թ. տարեվերջին՝ 23.1 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա) տնտեսության հիմնական ճյուղը արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Միսիան

Միսիան քաղաքի (2010թ. տարեվերջին՝ 16.8 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 206 կմ հեռավորության վրա) տնտեսության ծավալում գերակշռողը էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները:

Դաստակերտ

Դաստակերտ քաղաքի (գտնվում է Երևանից 226 կմ հեռավորության վրա) բնակչությունը 2010թ. տարեվերջին կազմել է 0.3 հազ. մարդ: Ներկայումս աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:


Մեղրի

Մեղրի քաղաքի (2010թ. տարեվերջին՝ 4.8 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 373 կմ հեռավորության վրա) տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ

Ագարակ քաղաքի (2010թ. տարեվերջին՝ 4.9 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 385 կմ հեռավորության վրա) տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում է գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսային կետերը:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2011թթ. հունվարի 1-ի դրությամբ



Մանրածախ առևտրի օբյեկտներ

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	436	415	460	472	440
այդ թվում՝					
խանութներ	139	138	175	184	174
կրպակներ	280	248	246	244	219
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	3	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	4	5	4
առևտրի այլ օբյեկտներ	12	24	32	38	42

Կրթական հաստատություններ

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Պետական նախադպրոցական	50	55	51	46	49
Պետական հանրակրթական	124	123	124	125	123
Ոչ պետական հանրակրթական	-	1	1	-	-
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	18	18	15	19	17
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	1	2	2	4	4

¹ Այստեղ և հետայսու՝ 2009 և 2010թթ. ցուցանիշներում ներառված են նաև այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Պետական միջին մասնագիտական ուսումնական	8	8	8	8	8
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	2	2	2	2
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	1	1

Քաղաքային համայնքներ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	
		2010թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ
Կապան	ք. Կապան	45488	45459
Քաջարան	ք. Քաջարան	8498	8112
Գորիս	ք. Գորիս	23022	23074
Մեղրի	ք. Մեղրի	4775	4789
Ագարակ	ք. Ագարակ	4881	4908
Սիսիան	ք. Սիսիան	16735	16773
Դաստակերտ	ք. Դաստակերտ	303	303

* ՀՀ Մյունիքի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

Գյուղական համայնքներ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
1	Ագարակ		183	175
2	Ալվանք		343	323
3	Ախլաթյան		459	601
4	Ակներ		1338	1349
5	Աղիտու		304	376
6	Աղվանի		88	85
7	Աճանան		154	157
8	Անգեղակոթ		2057	2036
9	Անտառաշատ		120	111
10	Աշոտավան		647	653
11	Առաջաձոր		164	147
12	Արավուս		227	184
13	Արծվանիկ		578	573
14	Արևիս		140	71
15	Բալաք		213	201
16	Բարձրավան		175	174
17	Բնունիս		188	167
18	Բոնակոթ		2315	2152
19	Գեղանուշ	•Գեղանուշ •Գումարան	286	278
20	Գեղի	•Գեղի •Գեղավանք •Կարդ •Կիցք (Քիրս) •Վերին Գեղավանք (Փիրլու) •Քարուտ (Քլուրուտ)	138	167
21	Գետաթաղ		220	208
22	Գորայք		580	428
23	Գուղեմնիս		39	42
24	Դավիթ Բեկ		813	815
25	Դարբաս	•Դարբաս •Շամբ	1234	1213
26	Եղեգ		113	110
27	Եղվարդ		272	267
28	Թանահատ		76	74
29	Թասիկ		291	286
30	Իշխանասար		271	264
31	Լեհվազ		605	623
32	Լեռնաձոր	•Լեռնաձոր •Կավձուտ •Մուսալլամ •Ներքին Գիրաթաղ	547	986

** ՀՀ Մյունխենի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
		•Վերին Գիրաթաղ		
33	Լիճք		156	161
34	Լձեն		178	118
35	Լոր		420	421
36	Խորանց		55	52
37	Խնածախ		1073	1063
38	Խնձորեսկ		2260	2263
39	Խոզնավար		407	402
40	Խոտ		1079	1039
41	Ծավ	•Ծավ •Շիշկերտ	351	382
42	Ծղուկ		451	450
43	Կաղնուտ		109	106
44	Կարճևան		292	256
45	Կոռնիձոր		1326	1347
46	Կուրիս		61	66
47	Հայիձոր		707	601
48	Հարթաշեն		717	734
49	Հարժիս		1014	1013
50	Հացավան		280	245
51	Ձորաստան		61	62
52	Ճակատեն		137	135
53	Մուցք		375	357
54	Ներքին Խնձորեսկ		321	325
55	Ներքին Խոտանան		70	75
56	Ներքին Հանդ		78	69
57	Նժդեհ	•Նժդեհ(Մոֆլու) •Ցղունի	188	125
58	Նորաշենիկ		118	112
59	Նորավան		524	521
60	Նոր Աստղաբերդ	•Նոր Աստղաբերդ (Փայահան) •Աջաբաջ •Գետիշեն (Չայքենդ) •Ոչեթի (Հաջաթին)	93	97
61	Նոնաձոր		140	141
62	Շաղատ		1219	1215
63	Շաքի		1611	1268
64	Շենաթաղ		422	405
65	Շիկահող		189	133
66	Շինուկայր		2865	2767
67	Շվանիձոր		306	298
68	Շրվենանց		76	75
69	Շուռնուխ	•Շուռնուխ •Աղբուլաղ •Վանանդ (Ղուրդղուլաղ) •Ձորակ (Փայտամշակման գ.կ.)	224	204
70	Որոտան (Գորիսի տարածաշրջան)		307	308
71	Որոտան (Միսիանի տարածաշրջան)		282	238
72	Չափնի		56	58
73	Սալվարդ		396	226
74	Սառնակունք		519	480

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ
75	Սյունիք	•Սյունիք •Բարգուշատ (Ներքին Գյողաքլու) •Դիցմայրի •Խորձոր •Սգնակ(Արգնակ)	1294	1296
76	Սպանդարյան		486	485
77	Սվարանց		270	270
78	Սրաշեն		91	83
79	Սևաքար		102	97
80	Վահրավար		47	46
81	Վաղատին		756	675
82	Վաղատուր		476	458
83	Վանեք		71	54
84	Վարդանիձոր	•Վարդանիձոր •Այգեձոր •Թխկուտ (Մարալգամի)	292	294
85	Վարդավանք		91	94
86	Վերին Խոտանան		199	203
87	Վերիշեն		2532	2489
88	Տաթև		892	908
89	Տանձավեր		212	212
90	Տանձատափ		100	99
91	Տաշտուն		134	134
92	Տավրուս		96	86
93	Տեղ		2520	2525
94	Տոլորս		450	450
95	Տորունիք		138	124
96	Ուժանիս		87	89
97	Ույծ		586	584
98	Քաշունի		27	25
99	Քաջարան		212	217
100	Քարահունջ		1303	1305
101	Քարաշեն		640	584
102	Օխտար		87	82

ՀՀ Սյունիքի մարզի պայմանական 10 000 բնակիչ ունեցող սոցիալական մի շարք բնութագրիչներ, 2010թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10000	5033	4967
Ծնվածներ, մարդ	113	52	61
Մահացածներ, մարդ	83	39	44
Ամուսնություններ	45	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	27.2	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	249	123	126
հանրակրթական	1099	541	558
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	148	102	46
նախնական մասնագիտական (արհեստագործական)	17	4	13
միջին մասնագիտական	87	51	36
բարձրագույն մասնագիտական	151	80	71
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	50344
Մարզիկներ, մարդ	117	23	94
Զբաղվածներ, մարդ	3374
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	163	132	31
բժիշկներ	19
միջին բուժանձնակազմ	53
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	351	245	106
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1670
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	271	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	34147
թատրոն	1161
համերգ	-	-	-
թանգարան	324
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	33	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	13	X	X
միջին ծանրության	9	X	X
ծանր	10	X	X
առանձնապես ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: